ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/216

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Մասնակից՝ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, կրթական օբյեկտների (Ալավերդու թիվ 5 ավագ դպրոց) հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14151-2020 գրությամբ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 15.09.2020թ.-ի թիվ 08.1//24532-2020 գրության հիման վրա, 18.09.2020թ.-ին «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 18.09.2020թ.-ին

Բողոքներ քննող անձի 18.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/216 համարի ծածկագիրը:

25.09.2020թ.-ին, 02.10.2020թ.-ին և 16.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 02.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.10.2020թ.-ին:

2. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն-ի 15.09.2020թ.-ի թիվ 08.1//24532-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Նախարարության կողմից 2020 թվականի օգոստոսի 19-ին հրատապ բաց մրցույթի ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով կազմակերպված կրթական օբյեկտների (Ալավերդու թիվ 5 ավագ դպրոց) հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման գնման գործընթացին հայտ է ներկայացրել «Նավասարդ Շինարար» և «Տիտանյան եղբայրներ» ՍՊԸ-ները: Մասնակիցների կողմից հայտով ներկայացված երաշխիքի բնօրինակները հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝ մինչև 07.09.2020թ ժամը 17:00-ն, չեն ներկայացվել նախարարություն, ինչն էլ հիմք է հանդիսացել մասնակիցների հայտը մերժելուն:

Ելնելով վերոգրյալից, կից ներկայացնում եմ «Նավասարդ Շինարար» և «Տիտանյան եղբայրներ» ՍՊԸ-ների վերաբերյալ տվյալները և հիմքերը /կցվում են/՝ մասնակիցներին

գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:»:

Պատվիրատուն, ի պատասխան Բողոքներ քննող անձի 03.10.2020թ.-ի թիվ ԲՔԱ-LO/1/14985-2020 գրության, 08.10.2020թ.-ին թիվ 08.1//26915-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սկորև ներկայացնում եմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության դիրքորոշումը «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի առարկությունների վերաբերյալ.

«Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի պնդումը, որ նախարարության կողմից «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգը («Ալավերդու Սկ. Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շինարարական աշխատանքների ձեռքբերում) հայտարարվել է առանց իրավական հիմքի՝ չի համապատասխանում իրականությանը, քանի որ առկա է 02.07.2020թ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ու հայաստանի հանրապետության քաղաքաշինության կոմիտեին գումար հատկացնելու մասին» N 1128-Ն ՀՀ կառավարության որոշումը (պաշտոնական հրապարակման օրը՝ 08.07.2020թ, ուժի մեջ մտնելու օրը՝ 09.07.2020թ) և նախարարության կողմից հրապարարկված գնումների պլանում կատարված փոփոխությունը: Ընդ որում, նախարարության կողմից տեղեկագրում հրապարարկված գնումների պլանում կատարված փոփոխությունը էլեկտրոնային ձևով գնումների կատարման PPCM համակարգում (հանդիսանում է բաց հրապարակային տեղեկատվական հարթակ և հասանելի է հանրությանը) հաստատված է նախարարության պատվիրատուի ղեկավարի կողմից, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և, հաշվի առնելով, որ նախարարության գնման գործընթացները կազմակերպվում են էլեկտրոնային ձևով՝ PPCM և ARMEPS համակարգերով, իրավական հիմքերի բացակայության դեպքում գնման գործընթացը հնարավոր չէր լինի իրականացնել:

Ինչ վերաբերում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ կառավարության 04.05.2017 թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ-1) 16-րդ և 17-րդ կետերի պահանջների, ինչպես նաև ՀՀ կառավարության 13.04.2017թ N 390-Ն որոշման 3-րդ հավելվածով հաստատված «Գնումների պլանի լրացման, հաստատման և

հրապարակման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ-2) խախտմանը, ապա Կարգ-2-ի 3-րդ բաժնի 4-րդ կետով սահմանված է, որ Պատվիրատուի ղեկավարի կողմից գնումների պլանը հաստատվում է մինչև տվյալ տարվա փետրվարի 1-ը՝ բացառությամբ նույն կարգի 5-րդ կետի, ըստ որի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանը հաստատվում է յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ, ինչպես և դրանում կատարվող փոփոխությունները:

Միաժամանակ նշեմ նաև, որ մասնակիցը մինչև գնման գործընթացին հայտ ներկայացնելը իրավունք ուներ պահանջելու պարզաբանում, բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը), ի վերջո՝ չմասնակցելու «առանց իրավական հիմքի» հայտարարված գնման գործընթացին, որը հայտարարվեց չկայացած իր իսկ անգործության պատճառով (գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չներկայացվեցին հրավերով նախատեսված փաստաթղթերը): Այսինքն, ստացվում է, որ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ն, հայտերը բացելուց և վերջինիս համար անցանկալի արդյունքների արձանագրումից հետո, հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից և, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ի հայտ է բերել գնման գործընթացը «առանց իրավական հիմքի» կազմակերպելու մասին իրականությանը չհամապատասխանող տեղեկատվությունը:»:

3. <u>«Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 18.09.2020թ.-ի գրությամբ դիմել է «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14151-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը 22.09.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար 19.08.2020 թվականին հայտարարվել է թիվ «ՀՀԿԳՄՄՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով հրատապ բաց մրցույթ՝ «Ալավերդու Ստ. Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում

ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով:

Ընթացակարգին ի թիվս մյուս մասնակցի հայտ է ներկայացրել նաև «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Հայտերի բացումը տեղի է ունեցել armeps.am համակարգի միջոցով 04.09.2020 թվականին ժամը 16:00-ին:

Ընկերությունը սահմանված կարգով armeps.am համակարգի միջոցով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթում կցել է նաև հայտի ապահովման Ականավորված տարբերակը:

Սակայն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.09.2020 թ.-ի ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2-րդ արձանագրության 7.1-րդ կետով արձանագրվել է, որ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված երաշխիքի բնօրինակը հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝ մինչև 07.09.2020 թվականի ժամը 17:00-ն չի ներկայացվել նախարարություն, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության պահանջներին և համաձայն հրավերի 4.3 կետի 3-րդ ենթակետի՝ հիմք է հանդիսանում հայտերը մերժելու համար: Արձանագրության 8.1-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը հիմք ընդունելով արձանագրության 7.1-րդ կետը «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«ՀՀԿԳՄՍՆՀԲԼԱՇՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի (հետայսու նաև՝ ընթացակարգ) հրավերի ՄԱՍ 1-ի 7.1-դ կետի՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (Հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 2-ի 2.4 կետի՝ հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3): Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (Ականավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (Ականավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Ընկերությունը սահմանված կարգով armeps.am համակարգի միջոցով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթում կցել է նաև հայտի ապահովման

Ականավորված փարբերակը, որից ուղղակիորեն հետևում է, որ ունի նաև հայտի ապահովման բնօրինակը ու եթե Հանձնաժողովը գտնում էր, որ Ընկերությունը հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը, ապա ինչու չի տրամադրել շտկման հնարավորություն, այլ փոխարենը մերժել է հայտը:

Համաձայն Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից՝ գտնում ենք, որ Կարգի 40-րդ և 41-րդ կետերը ուղղակիորեն սահմանում են արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային առաջարկի՝ ընդ որում, այն էլ որոշ բացառություններով:

Վերը նշված կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման, ուստի տվյալ դեպքում Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումը ոչ իրավաչափ է, քանի որ չի բխում Կարգի 41-րդ կետի սահմանված պահանջներից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգեր և բողոքներ, օրինակ՝ թիվ ՍՅ-ԼՕ-2020/96 ընթացակարգի վրաբերյալ կայացված որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը (ներկայացվում է համառոտ).

«Հանձնաժողովի 28.02.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.10 կետը, հանձնաժողովը 23.03.2020թ.-

ին «Երէներգո» ՓԲԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է, քանի որ Մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային առաջարկի՝ ընդ որում որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման, ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից «Երէներգո» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումը ոչ իրավաչափ է և չի բխում Կարգի 41-րդ կետի սահմանված պահանջներից, քանի որ Երաշխիքի բնօրինակ տարբերակը Կարգով սահմանված ժամկետում չներկայացնելու պարագայում Հանձնաժողովը պետք է մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը և դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեր վերջինիս առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետը...»:

Տեղեկացնում եմ նաև, որ 08.09.2020 թվականին հանձնաժողովի քարտուղարը զանգահարել է և հայտնել, որ հայտի ապահովման բնօրինակը չի ներկայացվել, այնուհետև Ընկերությունը նույն օրը հայտի ապահովման բնօրինակը ուղեկցող գրությամբ ներկայացրել է ԿԳԱՍ նախարարություն, որը ժամը 16:00-ին մուտքագրվել է ընդհանուր բաժին:

Ելնելով վերոգրյալից, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Մասնակիցը, ի լրումն 22.09.2020թ.-ի ներկայացրած դիրքորոշման, 25.09.2020թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ուսումնասիրել մի շատ կարևոր հանգամանք, այն է՝ Պատվիրատուի կողմից հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը, որի պարագայում միայն պարզ կլինի, թե ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում կստացվի, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:»:

Մասնակիցը 28.09.2020թ.-ի նաև հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ուսումնասիրել մի շատ կարևոր հանգամանք, այն է՝ Պատվիրատուի կողմից հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը, որի պարագայում միայն պարզ կլինի, թե ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքերի, որի արդյունքում կստացվի, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև Օրենք) 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգի» 1-ին կետը սահմանում է, որ հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող

արտաբյուջետային միջոցների հաշվին (այսուհետ՝ նաև պետական բյուջեի միջոցներ) կատարվելիք գնումների պլանի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) սույն կետի 1-ին ենթակետում չնշված միջոցների հաշվին (այսուհետ՝ այլ միջոցներ) կատարվելիք գնումների պլանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ ա. գնման առարկայի բնութագրերը....:

Ուսումնասիրելով www.procurement.am հասցեում գործող ինտերնետ կայքի գնումների պլաններ բաժնում Պատվիրատուի կողմից 27.07.2020 հրապարակված առկա տեղեկատվությունը պարզվում է, որ որպես գնումներ պլան հրապարակվել է 2020 թվականի գնումների պլանում փոփոխությունների և/կամ լրացում կատարելու մասին ծանուցումը՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի 20 մայիսի N 231-Ն հրամանով հաստատված գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ծանուցման օրինակելի ձևին համապատասխան, մինչդեռ փաստում եմ, որ առկա չէ ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգի» համաձայն և սահմանված պահանջներին համապատասխան տեղեկագրում հրապարակված գնումների պլանը:

Ելնելով վերոգրյալից գտնում եմ, որ «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Վերոնշյալ փաստի առթիվ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ բազմաթիվ ընթացակարգեր: Օրինակ՝ թիվ ՍՅ-ՆԳ-2020/200 ընթացակարգի վերաբերյալ կայացված որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը (ներկայացվում է համառոտ).

«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված ու տեղեկագրում որպես գնումների պլան հրապարակված տեղեկատվությունը և արձանագրել, որ Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 23.07.2020թ. հրապարակվել է 2020 թվականի գնումների պլանում փոփոխությունների և/կամ լրացում կատարելու մասին ծանուցումը՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի 20 մայիսի N 231-Ն հրամանով հաստատված գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ծանուցման օրինակելի ձևին համապատասխան, մինչդեռ արձանագրում եմ, որ առկա չէ ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգի» համաձայն և սահմանված պահանջներին համապատասխան տեղեկագրում հրապարակված գնումների պլանը:

Այսպիսով արձանագրում եմ, որ «ՀՀԿՄՄՍՆԳՀԾՁԲ-20/126» ծածկագրով Ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2020 թվականի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ իրավական հիմքի բացակայության պայմաններում կազմակերպված ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանել ի վնաս Ընկերության, ուստի հնարավոր չէ արձանագրել «Աստիճան» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն»:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ

կետի նախատեսված որևէ խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Մասնակիցը 15.10.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար 19.08.2020 թվականին հայտարարվել է թիվ «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով հրատապ բաց մրցույթը՝ «Ալավերդու Ստ. Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով:

Ընթացակարգին ներկայացրել նաև «ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Ընկերությունը սահմանված կարգով www.armeps.am համակարգի միջոցով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթում կցել է նաև հայտի ապահովման սկանավորված տարբերակը:

Սակայն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.09.2020 թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2-րդ արձանագրության 7.1-րդ կետով արձանագրվել է, որ «ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված երաշխիքի բնօրինակը հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝ մինչև 07.09.2020 թվականի ժամը 17:00-ն չի ներկայացվել նախարարություն, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության պահանջներին և համաձայն հրավերի 4.3 կետի 3-րդ ենթակետի՝ հիմք է հանդիսանում հայտերը մերժելու համար: Արձանագրության 8.1-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը հիմք ընդունելով արձանագրության 7.1-րդ կետը «ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ 08.09.2020 թվականին հանձնաժողովի քարտուղարը զանգահարել է և հայտնել, որ հայտի ապահովման բնօրինակը չի ներկայացվել, այնուհետև Ընկերությունը նույն օրը հայտի ապահովման բնօրինակը ուղեկցող գրությամբ ներկայացրել է ԿԳՄՍ նախարարություն, որը ժամը 16:00-ին մուտքագրվել է ընդհանուր բաժին:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ա) Սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացված նախորդ դիրքորոշմամբ Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ և 41-րդ կետերը ուղղակիորեն սահմանում են արձանագրված անհա¬մա¬պատաս¬խանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային առաջարկի, այն էլ որոշ բացառություններով:

ՍՊԸ-ն հայտնել է, որ վերը նշված կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատաս-խանություններն ենթակա են շտկման, ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված

որոշումը ոչ իրավաչափ է, քանի որ չի բխում Կարգի 41-րդ կետի սահմանված պահանջներից:

Որպես նախադեպային որոշում՝ ՍՊԸ-ն ներկայացրել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից քննված թիվ ՍՑ-ԼՕ-2020/96 ընթացակարգի վրաբերյալ կայացված որոշումը, որով գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը (ներկայացվում է համառոտ).

«Հանձնաժողովի 28.02.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.10 կետը, հանձնաժողովը 23.03.2020թ.-ին «Երէներգո» ՓԲԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է, քանի որ Մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարդի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային առաջարկի՝ ընդ որում որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման, ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից «Երէներգո» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումը ոչ իրավաչափ է և չի բխում Կարգի 41-րդ կետի սահմանված պահանջներից, քանի որ Երաշխիքի բնօրինակ տարբերակը Կարգով սահմանված ժամկետում չներկայացնելու պարագայում Հանձնաժողովը պետք է մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը և դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեր վերջինիս առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետը.....»:

Հարգելի պարոն Օհանյան, 2010թ. հոկտեմբերի 2-ի կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/104 որոշմամբ արձանգրվել է, որ «ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ-ի կողմից 17.09.2020թ. ներկայացված բողոքի վրա չի կարող տարածվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/96 որոշման հիմնավորումները և իրավակարգավորումները, քանի որ թիվ ՍՑ-ԼՕ-2020/96 որոշման վրա տարածվել է ՀՀ կառավարության 526-Ն որոշումը՝ 10.10.2019թ. թիվ 1422-Ն որոշման խմբագրությամբ, մինչդեռ «ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ-ի կողմից 17.09.2020թ. ներկայացված բողոքի վրա արդեն տարածվում է ՀՀ կառավարության 526-Ն որոշումը՝ 21.05.2020թ. թիվ 778-Ն որոշման խմբագրությամբ, և այս տեսանկյունից, ըստ էության,

թիվ ՍՅ-ԼՕ-2020/96 որոշումը չի կարող դառնալ որպես նախադեպ՝ «ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ-ի կողմից 17.09.2020թ. ներկայացված բողոքը բավարարելու և բանկային երաշխիքի բնօրինակը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում Կարգի 41-րդ կետի պահանջները կիրառելի դարձնելու համար:

Հարգելի պարոն Օհանյան, «ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը քննելիս՝ խնդրում ենք հաշվի առնել, որ սույն ընթացակարգը չի հետապնդում հայտի մերժման իրավաչափության որոշման հարց, ինչպես դա արվել էր ՍՊԸ-ի բողոքով, այլ ընդամենը միտված է նշված ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում թույլ տալու փաստի առկայության բացահայտմանը:

Իրոք, ուսումնասիրելով ՍՊԸ-ի հայտի մերժման իրավական հիմքը և գնահատող հանձնաժողովի կողմից վկայակոչված իրավական նորմը՝ ակնհայտ է դառնում, որ հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժվել է 21.05.2020թ. թիվ 778-Ն որոշման խմբագրությամբ ՀՀ կառավարության 526-Ն որոշման հիման վրա, և հրավերը նույնպես պարունակում է նշված խմբագրությամբ որոշման դրույթները: Եվ այս տեսանկյունից գնահատող հանձնաժողովի կողմից Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտումը հիմնավորելը գրեթե անիրատեսական է:

Սակայն արդյոք «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով հրատապ բաց մրցույթի վրա պետք է տարածվեր ՀՀ կառավարության 526-Ն որոշումը՝ 21.05.2020թ. թիվ 778-Ն որոշման խմբագրությամբ, թե վերոհիշյալ ընթացակարգը պետք է կարգավորվեր է ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ՝ 10.10.2019թ. թիվ 1422-Ն որոշման խմբագրությամբ:

Մասնավորապես, ՀՀ կառավարության 526-Ն որոշումը՝ 21.05.2020թ. թիվ 778-Ն որոշման խմբագրությամբ, մասնավորապես, 2-րդ մասը հստակ սահմանել է, որ նշված փոփոխությունների պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը սկսած և դեռևս չավարտված գնման գործընթացների, բացառությամբ պայմանագրի և որակավորման ապահովման վերաբերող դրույթներին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար 19.08.2020 թվականին հայտարարված թիվ «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված մրցույթը սկսվել է մինչև 21.05.2020թ. թիվ 778-Ն որոշման ընդունումը, քանի որ ցանկացած գնման ընթացակարգ սկսվում է գնումների պլանավորումից սկսած, իսկ «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-

20/11» ծածկագրով հրատապ բաց մրցույթը պլանավորվել և ներառվել է նախարարության գնումների պլանում՝ մինչև թիվ 778-Ն որոշման ընդունումը:

Համապատասխանաբար, ՍՊԸ-ի կարծիքով, ՀՀ կառավարության 526-Ն որոշման, 21.05.2020թ. թիվ 778-Ն որոշման խմբագրությամբ, 2-րդ մասի ուժով՝ նշված փոփոխությունների պահանջները չպետք է տարածվեին մինչև այդ որոշումն ուժի մեջ մտած սկսած և դեռևս չավարտված ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով հրատապ բաց մրցույթի վրա:

Այս տեսանկյունից գտնում ենք, որ նշված փաստը պետք է հաշվի առնել և «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակից-ների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/216 ընթացակարգի հիմքերի նկատմամբ նույնպես կիրառել թիվ ՍՑ-ԼՕ-2020/96 որոշման հիմնավո¬րումները և իրավակարգավորումները, քանի որ Ընթացակարգի հրավերը կազմել է 21.05.2020թ. թիվ 778-Ն որոշման 2-րդ մասի պահանջների խախտմամբ:

Իհարկե, ներկայացրած բողոքով «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ն այդ փուլում չէր կարող վիճարկել Ընթացակարգի հրավերի գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու փաստը, սակայն գտնում ենք, որ վերոհիշյալը կարող է դիտարկվել որպես «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում թույլ տալու փաստը մերժելու հիմք:

բ) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք դիտարկել նաև մի շատ կարևոր հանգամանք. արդյոք ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում հայտի ապահովման բնօրինակը չներկայացնելը կարող է որակվել որպես գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում և արդյոք այդ գործողությունը հիմք է՝ մասնակցին Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու համար:

Որպեսզի մասնակցին վերագրվի գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, անհրաժեշտ է, որպեսզի մասնակիցը ստանձնած լինի նման պարտավորություն կամ առնվազն այդպիսին որակվի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով

սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով, Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը հստակ և սպառիչ սահմանում է այն բոլոր դեպքերը, երբ մասնակցի կողմից դրսևորած վարքագիծը կարող է դիտարկվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, դրանք են.

1. հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող.

2. մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը.

3. ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը:

Որպեսզի «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին վերագրվեր գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, անհրաժեշտ էր, որպեսզի առկա լիներ Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով նախատեսված որևիցե հիմքերից մեկը:

Փորձենք դիտարկել այդ հիմքերը առանձին-առանցին, բացահայտելով, արդյոք «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի կողմից այդ հիմքերից որևիցե մեկը խախտվել է, թե՝ ոչ:

1. Հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող.

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում առկա չի եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով և Ընթացակարգի հրավերով ամրագրված «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի սահմանափակման որևիցե մի հիմքը, ուստի և գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը չի կարող որակվել որպես իրականությանը չհամապատասխանող և այս հիմքով «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

2. Մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը

Ակնհայտ է, որ մասնակիցը Հրավերով սահմանված կարգով հայտով ներկայցրել է Հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերը, այդ թվում նաև բանկային երաշխիքի բնօրինակի սկանավորված տարբերակը, ուստի այս հիմքով «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-

ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

3. Ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը:

Ներկայացված փաստերից և գնահատող հանձնաժողովի արձանագրություններից ակնհայտ է դառնում, որ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ն չի ճանաչվել որպես ընտրված, ուստի և այս հիմքով «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ի մի բերելով վերոհիշյալը՝ կարելի է փաստել, որ տվյալ դեպքում առկա չի եղել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ ինչպես երևում է վերոշարադրված վերլուծությունից՝ հայտի ապահովման բնօրինակը սահմանված ժամկետում չներկայացնելը, ՍՊԸ-ի կարծիքով, չի կարող դիտարկվել որպես Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման թվարկված որևիցե հիմքերից մեկը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով սույն դիրքորոշմամբ ներկայացված փաստարկները՝ խնդրում ենք «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին չվերագրել գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/216 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կրթական օբյեկտների (Ալավերդու թիվ 5 ավագ դպրոց) հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 19.08.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Մրցույթի հրավերի թիվ 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի համաձայն՝ վերոնշյալ աշխատանքի կատարման համար որպես

գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45611100/61:

iii. www.armeps.am/PPCM/ կայքում առկա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 27.08.2020թ.-ին կատարված 2020 թվականի գնումների պլանի փոփոխության համաձայն՝ Մրցույթի 1-ին չափաբաժնի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45611100/61, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ ՀԲՄ, գումարը՝ 80 126 990 ՀՀ դրամ:

iv. www.gnumner.am կայքում 27.07.2020թ.-ի հրապարակված գնումների պլանի համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հրապարակված 2020 թվականի գնումների պլանում փոփոխություններ և/կամ լրացումների կատարելու մասին ծանուցման համաձան՝ որպես պատվիրատու նշված է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ծրագրի անվանումը՝ «1183 ապահով դպրոց» ծրագրի «32001 կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավալում» և «32004 ավագ մակարդակի կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում»՝ նշելով նաև ծրագրի դասման բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինը, խումբը և դասը:

Նույն ծանուցման 1-ին տողով որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45611100/61, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ ՀԲՄ, գումարը՝ 80 126 990 ՀՀ դրամ:

v. Մրցույթի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 04.09.2020թ.-ի ժամը 16:00 ներառյալ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ն:

vi. Մասնակիցը թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով հրատապ բաց մրցույթ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

vii. «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ն «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից 03.09.2020թ.-ին տրամադրված բանկային երաշխիքի (այսուհետ նաև՝ Երաշխիք) բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

viii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.09.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 7.1-րդ կետի համաձայն՝ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված երաշխիքի բնօրինակը հրավերով սահմանված կարգով և ժամկետով՝ մինչև 07.09.2020թ.-ը ժամը 17:00-ն, չի ներկայացվել Պատվիրատուին, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության պահանջներին և համաձայն Մրցույթի հրավերի 4.3-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հիմք է հանդիսանում հայտը մերժելու համար:

ix. Նույն արձանագրության 8.1-րդ և 8.3-րդ կետերի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով նույն արձանագրության 7.1-րդ կետը՝ Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14151-2020 գրությամբ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է րավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ

կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կրթական օբյեկտների (Ալավերդու թիվ 5 ավագ դպրոց) հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 19.08.2020թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանված եղել 04.09.2020թ.-ի ժամը 16:00 ներառյալ, որին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ն որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից 03.09.2020թ.-ին տրամադրված բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Հանձնաժողովը, 04.09.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 7.1-րդ կետով արձանագրել է, որ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված երաշխիքի բնօրինակը հրավերով սահմանված կարգով և ժամկետով՝ մինչև 07.09.2020թ.-ը ժամը 17:00-ն, չի ներկայացվել Պատվիրատուին, ինչը չի համապատասխանում Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության պահանջներին և համաձայն Մրցույթի

հրավերի 4.3-րդ կետի 3-րդ ենթակետի՝ Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 42-րդ կետն ուղղակիորեն սահմանում է մասնակցի հայտն անբավարար գնահատելու և մերժելու դեպքերը, ներառյալ այն, երբ մասնակիցը Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված, մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն իրավաչափ է և բխում է Կարգի 42-րդ կետով և 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված պահանջներից:

Անդրադառնալով Մասնակցի դիրքորոշմամբ ներկայացված գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից նախկինում քննված թիվ ՍՑ-ԼՕ-2020/96 ընթացակարգի շրջանակներում կայացված որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ այն կիրառելի չէ, քանի որ նշված ընթացակարգը նախաձեռնվել է և քննությունն էլ իրականացվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի ՀՀ կառավարության 10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն որոշմամբ առկա դրույթների հիման վրա, իսկ սույն բողոքի քննության շրջանակներում կիրառման ենթակա է ՀՀ կառավարության 21.05.2020թ.-ին թիվ 778-Ն որոշմամբ հաստատված դրույթների փոփոխությունները:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով հրատապ բաց մրցույթ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ ներկայացված այն հանգամանքին, որ Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 23.07.2020թ.-ին հրապարակվել է 2020 թվականի գնումների պլանում փոփոխությունների և/կամ լրացում կատարելու մասին ծանուցումը, սակայն առկա չէ ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգի» համաձայն և սահմանված պահանջներին համապատասխան տեղեկագրում հրապարակված գնումների պլանը, որի արդյունքում Ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2020 թվականի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Կարգի 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում,

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը),

3) պայմանագրի կնքում,

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

Հակառակ դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված ցանկացած որոշմամբ կխախտվեն գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման» կարգի 2-րդ կետի.

1-ին ենթակետի համաձայն՝ 1-ին և 2-րդ սյունակներում լրացվում են գնումների միասնական անվանացանկով սահմանված (այսուհետ՝ անվանացանկ) միջանցիկ ծածկագիրը և անվանումը՝ անվանացանկի 4-րդ մակարդակին համապատասխան,

2-րդ ենթակետի համաձայն՝ 3-րդ սյունակում լրացվում է գնման ձևը: Ընդ որում, գնման ձևը լրացնելիս հաշվի է առնվում, որ գնման գինն անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերի հանրագումարն է,

3-րդ ենթակետի համաձայն՝ 4-րդ սյունակում լրացվում է … «դրամ» բառը, եթե սույն ենթակետի «ա»-«ժթ» ենթակետերում նշված չափման միավորներից որևէ մեկը կիրառելի չէ,

4-րդ ենթակետի համաձայն՝ 5-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մեկ միավորի գինը,

5-րդ ենթակետի համաձայն՝ 6-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության քանակը: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Քանակը» սյունակում նշվում է «1» թիվը,

6-րդ ենթակետի համաձայն՝ 7-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր գումարը՝ հազ. դրամով: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Միավորի գինը» սյունակում նշված գումարը հավասար է 7-րդ սյունակում նշված գումարը բաժանած հազարի: Հակառակ դեպքում 7-րդ սյունակում նշվում է «Միավորի գինը» և «Քանակը» սյունակների արտադրյալը բաժանած հազարի:

Նույն կարգի 3-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ գնումների պլանում փոփոխությունները կատարվում են սույն կարգի 2-րդ կետով սահմանված պայմաններով լրացումներ կատարվելու ձևով: Գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, գնումների պլանում կատարված փոփոխությունները և լրացումները տեղեկագրում հրապարակվում են գնումների պլանի ամբողջական տեսքով:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կրթական օբյեկտների (Ալավերդու թիվ 5 ավագ դպրոց) հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 19.08.2020թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով հրատապ բաց մրցույթ հրավերի թիվ 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի համաձայն՝ վերոնշյալ աշխատանքների կատարման համար որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45611100/61:

www.armeps.am/PPCM/ կայքում առկա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 27.08.2020թ.-ին կատարված 2020 թվականի գնումների պլանի փոփոխության համաձայն՝ Մրցույթի 1-ին չափաբաժնի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45611100/61, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ ՀԲՄ, գումարը՝ 80 126 990 ՀՀ դրամ:

www.gnumner.am կայքում 27.07.2020թ.-ի հրապարակված գնումների պլանի համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հրապարակված 2020 թվականի գնումների պլանում փոփոխութուններ և/կամ լրացումների կատարելու մասին ծանուցման համաձան՝ որպես պատվիրատու նշված է ՀՀ կրթության,

գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ծրագրի անվանումը՝ «1183 ապահով դպրոց» ծրագրի «32001 կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավալում» և «32004 ավագ մակարդակի կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում»՝ նշելով նաև ծրագրի դասման բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինը, խումբը և դասը:

Նույն ծանուցման 1-ին տողով որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45611100/61, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ ՀԲՄ, գումարը՝ 80 126 990 ՀՀ դրամ:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից Մրցույթը կազմակերպվել է իրավական հիմքի առկայության պայմաններում: Սույն դեպքում, Կարգի 16-րդ կետի իմաստով, գնումների պլանը հաստատված և հրապարակված է, գնման առարկան ներառված է գնումների պլանում: Ինչպես նաև www.armeps.am/PPCM/ կայքում առկա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 27.08.2020թ.-ին կատարված 2020 թվականի գնումների պլանի փոփոխության համաձայն՝ Մրցույթի 1-ին չափաբաժնի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45611100/61, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ ՀԲՄ, գումարը՝ 80 126 990 ՀՀ դրամ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ թեև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կրթական օբյեկտների (Ալավերդու թիվ 5 ավագ դպրոց) հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 19.08.2020թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման առարկան ներառվել է գնումների պլանի փոփոխություններով, և այն հրապարակվել է ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման» կարգի 9-րդ կետի դրույթների խախտմամբ, այն է՝ գնումների պլանում կատարված փոփոխությունները և լրացումները տեղեկագրում հրապարակված չեն գնումների պլանի ամբողջական տեսքով, սակայն այդ դրույթների խախտումը չի կարող հանգեցնել գնումների պլանի ոչ իրավաչափ, ուստի և գնման գործընթացի առանց իրավական հիմքի կազմակերպված լինելու հանգամանքին: Քանի որ նշված որոշմամբ սահմանված էական նշանակություն ունեցող՝ գնումների պլանի ձևին և բովանդակությանը վերագրվող դրույթները պահպանված են:

Անդրադառնալով Մասնակցի կողմից 15.10.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմանը, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Բողոքարկմանը (ընթացակարգին) ներգրավված մասնակիցների երաշխավորված իրավունքները սահմանվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով, Կարգով և ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով: Այդ նորմատիվ ակտերով է ապահովվում նաև ընթացակարգի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու իրավունքը և այդ իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտ նախադրյալները, որպիսիք չպահպանելու արդյունքում կխախտվի բողոքարկմանը (ընթացակարգին) ներգրավված կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները:

Ամփոփելով վերոգրյալները, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ բողոքարկման (ընթացակարգի) քննությանը ներգրավված մասնակիցները պետք է իրենց վերապահված իրավունքները, օրենքով սահմանված բողոքարկման (ընթացակարգի) 30-օրյա քննության ժամկետում, իրացնեն այնպես, որ որևէ մասնակից մյուսի համեմատ չգտնվի էականորեն նվազ բարենպաստ վիճակում:

Ընդ որում՝ հարկ է փաստել, որ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հրապարակման օրվա, ժամի և վայրի մասին տեղեկատվությունը (ժամանակացույցը) հրապարակվել է www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում 13.10.2020թ.-ին, իսկ որոշման հրապարակման օր է սահմանվել 16.10.2020թ.-ին ժամը 16:40-ին, որպիսի պայմաններում ընթացակարգի քննությունը, ըստ էության համարվել է ավարտված, իսկ օբյեկտիվ, լրիվ և ճիշտ որոշման կայացման համար և դրան ուղղված գործողություններն էլ՝ սպառված:

Այնուամենայնիվ, Բողոքներ քննող անձը Մասնակցի կողմից 15.10.2020թ.-ին ներկայացված դիրքորոշման վերաբերյալ հարկ է համարում է նշել նաև հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի, Կարգի 16-րդ և 17-րդ կետերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը ևս մեկ անգամ փաստում է, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման

գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ կառավարության 21.05.2020թ. թիվ 778-Ն «ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» կայացված որոշմամբ սահմանված ***«սկսած և դեռևս չավարտված գնման գործընթաց»*** եզրույթը ուղակիորեն կապվում է հրավերի հրապարակման պահի հետ, որով էլ և պայմանավորված, այդ պահից հաշշված, ծագում է գնման մասնակիցների իրավունքների և պարտականությունների իրագործման հնարավորությունը (հարաբերությունները):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի

լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի տվյալ պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14151-2020 գրությամբ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/216 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**